ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 150 -Ա

« 04 » ՀՈՒՆԻՍԻ 2025Թ

«ՎԱՅՔԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրնքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշմամբ հաստատված 10-րդ հավելվածի «II. Վայքի տարածաշրջան» բաժնի 11-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Վայքի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 1.1-ին կետի 5-րդ պարբերությունից հետո ավելացնել հետևյալ պարբերությունը.

«Վայքի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է «Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (պետական գրանցման համար՝ **44.120.1397346**) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան (միացում):

2. «Վայքի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 32 530 000 (երեսուներկու միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 32 530 (երեսուներկու հազար հինգ հարյուր երեսուն) հատ սովորական անվանական բաժնետոմս, 1 բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

Բոլոր 32 530 (երեսուներկու հազար հինգ հարյուր երեսուն) հատ սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը:»:

3. Հաստատել «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կանոնադրության փոփոխությունը:

4. Ընկերության տնօրեն Ռ. Ասլանյանին՝ երկշաբաթյա ժամկետում օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կատարված փոփոխության պետական գրանցման համար:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությանը:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Վայքի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 19.06.2024թ. գրանցված կանոնադրության անբաժանելի մասը:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք.Եղեգնաձոր